

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/Թարգմանիչ հրավիրելու մասին/

«01» հունիսի 2018թ.

ք.Երևան

Ոստիկանության Թումանյանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության կապիտան՝ Կ.Շախկյանս, վերանայելով՝ Փերշանտ Սինգլաի մարմնական վնասվածք ստանալու վերաբերյալ նախապատրաստվող նյութերով

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ-ի հունիսի 1-ին՝ ժամը 06:30-ին հաղորդում է ստացվել, որ իրենց է զանգահարել Մարինե Անդրանիկի Նիգոյանը և հայտնել, որ Աղթալա գյուղի, կամուրջի մոտ ծեծկոտուք է:

Պարզվել է, որ հունիսի 1-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում երկու անհայտ անձինք վիճաբանել են հնդկաստանի փաղաքացի Փերշանտ Աշոկսինգլա Սինգլաի հետ, որի ժամանակ վերջինիս ծեծի են ենթարկել:

Նկատի ունենալով, որ Փերշանտ Աշոկսինգլա Սինգլաի չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին և չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության լեզվին՝ հայերենի գրավոր խոսքին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենսգրքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Նախապատրաստվող նյութերով որպես թարգմանիչ հրավիրել <<Ֆինլոու>> ՍՊԸ-ի թարգման Սաթենիկ Ղարիբի Թովմասյանին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին ու գործով չչահագորգված անձ է:
2. Սաթենիկ Ղարիբի Թովմասյանին պարզաբանել իր իրավունքները և պարտականություններն ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ Քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀՈԲ տեսուչ՝

 Կ.Շախկյան

Սույն որոշումը ինձ հայտնվեց և նախազգուշացվեց ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ Քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգման՝

 Ս.Թովմասյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց՝

ՀՈԲ տեսուչ՝

 Կ.Շախկյան